

կրօնաւորներու հիմնարկութիւն ըլլայ (Ձալախան, Ճամբորդութիւն, Ա., էջ 162): Յայտնի է թէ Շիրակի Հոռոմոսի վանքի պատմութիւնը մերձեցուած է այս վանքին:

11. ՄԱԼԱՁԱՐԵՐԳԻ ԿԱՄ ՄԱՐՄԱՐԵՐԳԻ ՎԱՆՔԸ

Հարցահանգիստ գիւղին «Հարա-արեւելան հանդէպ, ոչ այնքան հեռի արձանացած է մի սար, որ բոլորովին առանձնացած է իւր շորս կողմերից եւ բարձրացած ձուածեւ» (Արցախ, էջ 293): Ահա այդ սարին կատարը գտնուած է վանք մը, որուն տեղն ապա եկեղեցի մը շինուած է: «Վանքի շուրջը պարիսպ է եղել, ինչպէս եւ խցեր, որոնցից միայն երկուսն են այժմ կանգուն» (Աղղբ. Հանդ., 1899, Ե., էջ 344): Վանքին խկահան անունն՝ անծանօթ: Մերձաւոր վայրերու անունով կոչուած է Մարգարեղի կամ Մածնարեղի<sup>1</sup>, նաև Հարցանկիսի (Հարցահանգիստի) վանք (հմմտ. Արցախ, էջ 43 կամ Ամենափրկչի վանքը եւ Արձագանք, 1886, էջ 286):

12. ՄԱԼԱՁԱՐԵՐԳԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Նոյն պիտի ըլլայ նախորդին հետ: 1666ին «Եկեղեցւորութեան սուրբ Ամենափրկչին քաջ եւ արի բարունակաւոր իրաւունք վարդապետի, ի գեղն Հարց հանգիստ» Աւետարան մը կը գրուի (Արցախ, էջ 43 եւ Արձագանք, 1886, էջ 296):

Միւսնոյն տեղը երկու տարի յետոյ Յովհաննէս ուրիշ Աւետարան մը կը գրէ «առաջնորդութեան ամբողջ Ամենափրկչին պարունակէր Յովհաննիսի» (Արց., էջ 45):

Հմմտ. քիչ ետքը՝ թիւ 14:

13. ՄՈՌԻՏԻ ԱՆԱՊԱՏԸ

Մոռուտ գիւղի մէջ եղած է անապատ մը. որուն անունն անծանօթ կը մնայ: Գանձակ փոխադրուած շիրիմաբարի մը վրայ գրուած է՝ «Այս է տապան Մոռուտ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետի. ՌՄԽԹ. Յունիս ԻԶ.ի (Արցախ, էջ 38 եւ 272. հմմտ. եւ Արձագանք, 1886, էջ 294):

<sup>1</sup> Անուն 1464ին Մաշտոց մը կը գրէ՝ «ի վանքս Մաշտոցից քոյ հովանաւ սուրբ Աստուածածնիս» (Հ. Ե. Ակիւնան, Հաւար. Յիշ. Երեւան, 453):

14. ՆԻԿԳՈՐԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

Նիւկղար գիւղի հարաւ-արեւմտեան կողմը շինուած է այս վանքը. որ այժմ աւերակ է: Գաւիթին ծեփին վրայ կարելի է կարդալ՝ «Ես Դաւիթ Եպիսկոպոս նորոգեցի գեկեղեցիս այս թվ. ՌՃԻԸ» (Արցախ, էջ 294. հմմտ. Արձագանք, 1886, էջ 307): Նորոգող հայրապետին մարմինը խորանին տակ ամփոփուած է:

Խաչքարի մը վրայ կայ՝ «ի հայրապետութեան Աղուանից Տեառն տէր Մինաս կաթողիկոսի, ի թագաւորութեան Պարսից Շահ-բասին, ես մեղապարս Աբրահամ Եպիսկոպոս եւ եղբարքս իմ Ներսէս կրօնաւոր եղաք» (Արձագանք, 1886, էջ 307):

Իսկ 1666ին՝ «Յեղեցւորութեան սուրբ Ամենափրկչին քաջ եւ արի բարունակաւոր իրաւունք վարդապետի... ի գեղն Հարցահանգիստ» կը գրուի Աւետարան մը, որմէ երկու տարի վերջ ուրիշ մը կը գրէ Յովհաննէս «առաջնորդութեան սուրբ ամբողջ Ամենափրկչին պարունակէր Յովհաննիսի» (Արցախ, էջ 43, 45 եւ Արձագանք, 1886, էջ 296):

Ամենափրկչի վանքը, ինչպէս կը տեսնուի եղած է Եպիսկոպոսանիստ: Ունեցած է շրջապարիսպ եւ կալուած (Աղղբ. Հանդ., 1899, Ե., էջ 346):

15. ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿԱՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ոսկանապատ գիւղի վանքն է այս: «Այդ եկեղեցեաց նոյնպէս դէպի հարաւ ձորի մէջ է Ս. Աստուածածնի քարաշէն անապատը, թաղակապ»: Արտաքին հարաւ-արեւելեան պատին ներքեւ թաղուած է եկեղեցւոյն վերանորոգողը՝ Յարութիւն Պապի, որ ՌՄՀ թուականին մեռած է: «Այս անապատը շինել է, ինչպէս պատմում են, Մելիք Ոսկանն, ուստի եւ Ոսկանա(յ) անապատ անունն է ստացել, որից եւ գիւղն Ոսկանապատ» (Արձագանք, 1886, էջ 294. Արցախ, էջ 275. տես եւ Ս. Աստուածածնի վանքը):

Յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «Եւ արդ ես Սարգսի որդի Խօջա Պատիս, առի զսուրբ աւետարանս ի ձեռաց անօրինաց եւ ետու վախճ ի դուռն Ոսկանապատու կուսանաց անապատին Աստուածածնին սուրբ տաճարին... ՌՃԼԳ» (Արձագանք, 1886, էջ 294. հմմտ. անդ եւ 1888, էջ 133):

Ինչպէս յիշատակարանը կը վկայէ՝ այս անապատը կուսաններու համար է:

16. ՊԱՆԴԱԼԻՈՆԻ ՎԱՆՔԸ

Սուլուկ գիւղի մերձ: Սարի մը դադաթին վրայ շինուած էր երբեմն մեծ վանք մը Պանդալիոն վկայի անունովը: Այսօր հիմն ի վեր կործանած: ՌՃԻ թուին Ղազար քահանան հոս աւետարան մը կը գրէ (Արցախ, էջ 271. Աղուանից երկիր եւ զրացիք, էջ 251): Սիրուած ուխտատեղի է (Աղղբ. Հանդ., 1899, Ե., 347 եւ Արձագանք, 1886, էջ 293):

17. ՊՏԿԵՍՐԵՐԳ ԿԱՄ ՊՏԿԻ Ս. ԳԵՈՐԳԻ ԱՆԱՊԱՏԸ

Նիւկղար գիւղի մօտ: Ուխտատեղի, մատուռ-անապատ (Արցախ, էջ 294): Համանուն վանք մը՝ Խաչենքի մէջ (հմմտ. անդ, էջ 162):

18. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔԸ

Ոսկանապատ գիւղի մերձ: Շինուած զՊԳ կամարի վրայ աւերակ (Արցախ, էջ 275):

19. ԳԵԱՐԵԱՆԱՅ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՄԻՐՁԻԿԻ ԱՆԱՊԱՏԸ ԿԱՄ ԱՍՏՈՒԱԾՄՈՐ ՎԱՆՔԸ

Ոսկանապատ եւ Մերդիկ գիւղերու քովերը: Շինուած է տորոնադոյն տաշուած քարերով: Ունի աւազ խորան մը եւ երկու փոքր խորան, վեց նեղ պատուհան եւ արեւմտեան կողմը դուռ մը: Երկարութիւնն է 12 մետր եւ լայնութիւնը գրեթէ 8 մետր: Ունի նաև դաւիթ մը, որ 7 մետր երկար եւ նոյնքան եւս լայն է: Շրջապատուած է պարիսպով, որ արդէն քանդուած է: Միարաններու սենեակներն ալ օրէ օր կը քայքայուին:

Գաւիթին մէջ կան թաղուածներ՝ «Հանգիստ հողապատեան Տեառն Եղիազարու, յաւէտ հանգիստ է անվշտակիր նշխար սորին, որ աստ կան, հողին գորով միջնորդ առ Տէր տանման փորձանաց զազանի, որ օծուել փութան զմիարանութիւն հողեւորական, փրկել ի փորձանաց այժմ եւ յազազայն, հանգաւ սուրբ հայրն մեր թուին Հայկազնուց ՌՃԿԻ»:

«Այս է հանգիստ Չարեքու անապատի Մկրտիչ վարդապետին, թվ. ՌՂԷ»:

«Այս է տապան տանս սպասուոր Մահտեսի վերաձայնի, Նաւասարդ ազա անուանի, եղբայր Թամբազ Քայանթարու Չակամ մեծ եղբայր Թամբազ Քայանթարու Չակամ մեծ Սահակի Ղարամուրատ գեղջէ, կոչի Արամի, մահն զիպէ վաթսուն Բ. ամի ՌՃԳ թուի եւ

չամբրիա (չատ ամեայ?) մարմին է ՂԳ. ամի» (Արցախ, էջ 277):

«Վանքիս արեւելեան կողմունն է Քեանգակերմազ մահանուանեալ Սարգիս վարդապետի գերեզմանն», որ օժտուած է ընդարձակ արձանագրութեամբ (Արցախ, էջ 277. Աղղբ. Հանդ., 1899, Ե., էջ 345): «Այս եկեղեցին կոչուած է Մերդիկի անապատ՝ գիւղին մօտ լինելուն պատճառով եւ Քեարխանի վանք՝ իւր մօտակայ Պղնձահանքի անունով» (Արձագանք, 1886, էջ 295): Ձալախան գայն կը կոչէ Աստուածամօր վանք (Ճամբ., Ա., էջ 169):

(Շարունակելի:)

ԿՈՐՏԻՆՆԵՐԸ ԺՈՐՏԵՆԵԿԵԳՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն:)

Ճառ Գ. Գիտութիւն լիցի հարց եւ եղբարցք իմոց թէ նախաճառիս պատմեցաք ըստ տեսար մտաց իմոց թէ ըստ ժամանակին բերման եւ թագաւորաց որպիսութեան թէ յոյք է ինն ուղորմածք եւ ինամածուք ի վերայ ըրակին իւրոց մանաւանդ ի վրայ քրիստոնէից: քանզի եմք ի միջի սոցա իրբեւ զճորտ եւ ճառայ. եւ այլ վատգարագոյն քան զճառայ քանզի տեսաք ճառայից ընչիւք ստանալով քաղցրութեամբ եւ ինամով պահեն զճառայն իւրեանց իսկ մեք առանց ստիկ ճառայեմք սոցա ըստ մարգարէին որ ասէ, յաճապեցին զժողովուրդս քոյ առանց քոյ. եւ ոչ քոյ թիւ ազազակի մերոյ: Վասն այս պատճառաւ գրեցի նախաճառիս զթագաւորաց կարգն հանդերձ թվականօքն. թէ տէր կամեցի գրելոց եմ գետոյնս ի բերումն ժամանակին եւ ըստ թագաւորաց որպիսութիւնն մինչեւ եմք այժմ թվիս. ՌԿԵ. եւ գիտելի է զի ի հիմնարկութենէ եկեղեցոյս որ ի ժամանակս Մուրատ թագաւորին էր. եւ եղև մինչեւ ի սատ. Ը. թագաւոր որ է թվականս մեր. ՌԾԳ. եւ այս թվիս մեռաւ սուլթան Մուհամմատն քանզի ստաջի ճառիս յիշեցաք զսորա որպիսութիւնն եւ ոչ է պիտոյ միւսանգամ յիշել: Այսուհետեւ դարձուցուք զբանս մեր ըստ կարգի ժամանակիս եւ թագաւորաց: քանզի ՌԾԳ. նստաւ սուլթան Ահմէտ:

ժԳ. տարի եւ ետոյ թվին. ՌԿԷ. սուլթան Մուսղաֆա ամիսս երիս. եւ մանդուլ արա-  
րին եւ դրին դաֆէս դարձեալ ի սոյն թվին.  
Թագաւորեաց սուլթան Օսման Գ. տարի գոսյ  
էսպան դորքն իւր թվին ՌՉԱ. նստաւ սուլ-  
թան Մուսղաֆա սա թագաւորեալ էր ա-  
միսս. Գ. եւ գաս հանին ի բանաէն եւ դար-  
ձեալ թագաւորեցուցին. Ա. տարի եւ կէս.  
գոսյ ասեն թէ սրահասախելք էր: Թվին  
ՌՉԲ. թագաւորեաց սուլթան Մուսղաֆա կարի  
քաջ եւ յախտող եւ եղեւ գինախնդիր արեան  
հօրն իւրոյ Օսման թագաւորին. եւ եսպան  
բազում ենիչէրիս սկսեալ ի էրզուրումայ  
մինչեւ ի Ուսկուտար: Ի սորա ժամանակին  
Տէր Մուսղաֆա կաթողիկոսն սկիզբն արար էջ-  
միածնա շինութեան որ էր թվականն մեր  
ՌՉԶ քանզի իշխանութեամբ Պարսից թագա-  
ւորին էր: Թվին ՌՉԲ. այս սուլթան Մուսղաֆան  
սաստիկ կասախ արար զթուլթունն ընդ ա-  
մենայն աշխարհս տէրութեան իւրոյ: Թվին  
ՌՉԳ. ծոպատիկ արարին ազգն յունաց որ  
են հոռոմք. որում ժամանակի էր վէզիրն  
Պաշրամ փաշայ որ էր ինքն յազգէն յունաց.  
վասն որոյ արար երեսպաշտութիւն ազգին  
յունաց. եւ զազգն Հայոց զիւր ծանուց թա-  
գաւորին որոյ վասն բարկացաւ թագաւորն  
եւ սպան ի Հայոց. ա. քահանայ եւ բ. աշ-  
խարհական: Թվին ՌՉԴ. սուլթան Մուսղաֆան  
զնաց ի վերայ Երեւանու եւ հառ գնա քանզի  
ուէչք ընդ իւր. էձժժ պատերազմող. եւ Մուս-  
ղաֆայ փաշան եղ ի մէջ բերդին. ԺԵՈՒ քաջ  
պատերազմող արամբք եւ ինքն դարձաւ:  
Թվին ՌՉԵ թագաւորն Պարսից Շահաբի  
եկեալ պատեաց զբերդն Երեւանայ. ձՈՒ  
պատերազմող արամբք մինչեւ. Ձ օրն հազիւ  
կարաց ասնուլ. եւ բազում արիւնհեղութիւն  
արար եւ անց գնաց: Թվին ՌՉԶ. նոյն սուլ-  
թան Մուսղաֆան գնաց ի վերայ Բաղդատայ եւ  
հառ գնա. եւ Պարսից գորան իսպառ կոտորեաց  
եւ դարձաւ մեծաւ յախտութեամբ եւ եկն  
Ստամպոլ: Թվին ՌՉԸ եղեւ հաշտութիւն ի  
մէջ երկուց թագաւորացն. զի թագաւորն  
Պարսից զԵրեւանն հառ. եւ թագաւորն օս-  
մանցոց զԲաղդատն. եւ միարանեցան. Բ. թա-  
գաւորք եւ պայման եղեալ մինչեւ. Է. տարի  
պահել զհաշտութիւնն. վասն որոյ ամք  
(ամեհայն?) աշխարհք արեւելեանք եւ արեւ-  
մտեանք օրհնեն եւ ողորմից տան երկուց  
թագաւորացն. զի կան խաղաղութեամբ. զի  
ՌՉԲ թվին մինչեւ ՌՉԹ փախտեան եւ ի  
թագստեան յափշտակութեան եւ յաւարա-

սուլթանն ի գերութեան եւ սպանութեան եւ  
ի սուր եւ մանաւանդ ողորմելի պղտ Հայոց.  
եւ էջմիածին զեռ նորողեալ էր դարձեալ  
եղեւ աւերակ եւ անարդարնակ մինչեւ ի  
ժամանակս Փիլիպպոս կաթողիկոսի: Եւ ետ  
հաշտութեան սկսաւ վերստին նորողել ողոր-  
մութեամբն Աստուծոյ: Այս սուլթան Մու-  
սղաֆա թագաւորս առաւել յախտող գտաւ որ-  
պէս զառիւծ զոր եղեր ի վերայ ամենեցուն եւ  
զՂբէական ազգս եւ զթագաւորս սարսեալ դո-  
ղային ի ամանէ եւ արար սա բազում ուղղու-  
թիւն: Իսկ ի թվին ՌՉԹ. մեռաւ եւ ամենայն  
աշխարհ կսկիծաց ընդ մեռանին նորա: Եւ  
մինչ տակաւին յողոչ կայր եւ հաճ առաջի  
իւր զեղպայրն իւր որոյ անունն էր սուլթան  
Իպրահիմ եւ կացոյց գնա թագաւոր ի տեղի  
իւր եւ ինքն մեռաւ: Ի թվին ՌՉԹ նստաւ  
Իպրահիմ թագաւոր. եւ ոչ արաւ զգործ ինչ  
արժանի յիշատակի ոչ արիւթիւն եւ ոչ  
ուղղութիւն. այլ եւ հետեւեցաւ սայ յախտս  
Իբրահիմութեան կարի առաւել զի եթող զկա-  
նայս եւ զհարձս իւր զորոս եւս պահէր առ  
ինքն: Այլ եւ զկանայս եւ զգոտերս իշխա-  
նաց բռնութեամբ ամեալ կատարէր զկամս  
իւր յայտնի եւ համարձակ: Վասն որոյ վշտա-  
ցան ազգն եւ իշխանքն իւր եւ միարանեալ  
զորդին նորա որոյ անունն էր սուլթան Մու-  
համմէտ եղին ի տեղի նորա թագաւոր Է ա-  
մաց: Եւ ապա զսուլթան Իպրահիմն սպանին  
ի թվին ՌՊԵ. ի սորա պատմութիւնն մի ըստ  
միտջ գրած է նոր ձեռաց զիւր սյամաւոր-  
քին յեաքն, թէ կամիս զիս եւ կարդաւ:  
Այսուհետեւ դարձուցուք զբանս մեր ի գործ  
կոնդակիս:

Կոնդակ Գ. Ի թվին ՌՊԱ. զերեզմանին  
ներքիդին յարեւելեան կողմն. Գ. ամուսն  
զառլան գնեցին. Գ. եկեղեցոյ ժողովուրդն:  
Ահա այսչափս բաւականացի. եւ զմնացեալն  
այլում ժամու կարդացուք թէ տէր կա-  
մեսցի ի լսելիս հարցոյ եւ եղբարցոյ: Որ  
ողորմի Բրիտոս Աստուած զայս սուրբ  
եկեղեցոյ երախտաւորաց. եւ զբացէ զա-  
նունս նոցա ի զպրութիւն կենաց. եւս ա-  
ռաւել որ աստ ժողովեալ հարցոյ եւ եղբարց.  
մանաւանդ մեղաւոր եւ անարժան եւ ամե-  
նայն բարեաց թափուր գրչի Անտոն իրիցուն  
հօրն տէր Ստեփաննոսին եւ մօրն Հոխիսի-  
մէին. եւ ամենայն արեան մերձաւորացս ըն-  
թերցողաց եւ լսողաց եւ զողորմի ասող  
քրիստոնէից. ողորմեա Բրիտոս Աստուած  
մեր: Ձկնի աւարտման ճառիս թէ արժան

տեանուք յիշատակ տուողիս եւ կամ զայս  
զրոյս աշխատողիս հողոց ասել մի ցան-  
ձրացիս: Որպէս ասէ աէրն զի արժանի է  
մշակն վարձու իւրոյ յաւիտեանս ամէն. Հայր  
մեր'':

Ճառ Գ. Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիս-  
տոս ամէն: Եւ զիտելի է սիրելի հարց իմոց  
եւ եղբարց ըստ ժամանակի բերմանց եւ ի  
կարգ թագաւորաց որ եկեալ ենաս ի սուլ-  
թան Մուհամմէտ թագաւորն: Եւ էր թվա-  
կանն ՌՊԵ. էր սա Է. ամաց տղա հասակաւ  
որպէս ասէ իմաստունն սողոմոն. վա՛յ թեղ  
քաղաք որոյ թագաւոր քոյ մանուկ է եւ իշ-  
խանք քոյ ընդ առաւոտս ուտեն. նոյնպէս եւ  
ի թագաւորել սորա բազմացան հրամանա-  
տարք քանզի առաջի ամի թագաւորութեանն  
յայտնեցաւ ոմն որ կոչիւր Հայտար ոլլու եւ  
ի միւս տարոյն Ղաթրոճի ոլլու. եւ այս ձէ-  
լալիքս բազում քնաս գործեցին ի զուրս եւ  
ի քաղաքս եւ ի կարաւանս եւ ետոյ հազիւ  
խախտեցին գոտս: Եւ տեսեալ նախարարք  
թագաւորին թէ աւերումն լինի աշխարհս  
Օսմանցոյ ընտրեցին խելացի եւ հանձարեղ  
Օսմանցոյ մի եւ արարին վէզիր որ կոչիւր  
Բորբուլու եւ սա վարէր թագաւորութիւնն  
ժամանակ ինչ: Եւ եղեւ թվականն ՌՁԷ յան-  
կարծակի երեւեցաւ ոմն որ կոչիւր Ապագա  
Հասան փաշայ եւ էր մանուկայ Հայկայ եւ  
եղեալ ի քաղաքէն ժողովեաց բազում զորս  
եւ եկեալ մինչեւ ի Ղոնեայ հաշտ ընդ թա-  
գաւորին. եւ ետոյ սկսաւ զիմադարձ լինել  
եւ այլ բազում զօրս ժողովելով եկն աստ ի  
Բոթանիս քաղաքս եւ նստաւ. Թ. օր Աս-  
տուածածնին պահուցն շատ նեղութիւն քա-  
ղեցինք զահրէի համար մեծ սարեան եղեւ.  
Եւ էր թիւ տուողն Ռ. ստակ ետուր: Եւ էր թիւ  
հեծելին ՀՈ. աւելի եւ կամ պակաս. եւ եկեալ  
գնաց ի Պրուսայ. նստաւ ԻՆ. օր աւելի կամ  
պակաս. եղեւ թագաւորին հակառակ: Եւ  
զօրքն աւելուց. մինչեւ ձՈՒ կամ ձՈՒ քանզի  
ժողովեաց զամենայն փաշայքն ի գլուխ իւր  
եւ ինքն սկսեց փաշայութիւն տալ. այս քա-  
ղաքն ետուր ձանի միւրքէ անուն փաշայի տա-  
նուէրն եկաւ զարտ արաւ քաղաքս շատ  
աւերութիւն արաւ: Ետոյ թագաւորէն հրա-  
մանք եկաւ ասելով թէ զլուին իմ ըողակն  
ձեր եւ այսու պատճառաւ շատ մարդ սատկե-  
ցուցին եւ ինքն միայն սակաւ արամբք զեր-  
ծաւ: Եւ ետոյ փաշան ինքն եկաւ Ե. կամ  
ՁՈ. մարդով քաղաք կամ գիւղ եկեալ ամ-  
բացան ի բերդն, քաղաքս անաէրունջ մնաց.

Իժ. օր ձեծ եղեւ. ետոյ գնացին ի քաղաքէս  
օր մի կոխեցին եւ Է. Ո. մարդ սատկեցու-  
ցին: Եւ նոքայ ելեալ ապականելով եւ աւար  
առնելով գնացին խառնեցան ի զունդս  
իւրեանց: Եւ առաքեաց թագաւորն զոմն  
Մուսղաֆա փաշայ եւ եկեալ ժողովեաց բա-  
զում զօրս. եւ գնացեալ պատերազմեցան  
Էլլուն ուլասին. եւ պարտեցաւ կողմն Մուս-  
ղաֆա փաշային: Եւ դարձեալ եկն թագաւո-  
րէն հրամանք ասելով թէ անցեալ եմ քնա-  
սէտ ձերմէ եւ այլ բազում պատրուական  
բանս եւ զՀայկայն դարձեալ մանուկ ստուեալ:  
Եկեալ մտաւ ի Հայկայ սակաւ արամբք. եւ  
գտեալ ժամ ինչ թաւոյ եւ սատկեցուցին ի  
փառն սատանայի. եւ զօրքն իւր ի տեղիս  
տեղիս մահացուցին: Աստուած խաղաղու-  
թիւն տայ աշխարհի եւ զհոսութիւն այժմոյս  
ժամանակիս. ամէն:

Կոնդակ Գ. Ի թվին ՌՁԹ. վախճանե-  
ցաւ տէր Անտոնն. Աստուած ողորմի իւր հո-  
գոյն ետուր Ռ. ստակ. եւ կախեցին կանդեղ  
խորանին դրան աջակողմեան զիհն: Դար-  
ձեալ Աստուած ողորմի տէր Անտոնին իրից-  
կին հողոյն ետ. Ա. կարաց սեղան ծածկոց:  
Ի թվին ՌՁԺ. տէր Անտոնի որդին տէր  
Ստեփաննոս ձեռնադրեցին:

Ի թվին ՌՁԺԲ. ամին այս է որ զբսի  
զայտրմն գորով շինեցուցին Աստուած օրհնէ  
զժողովուրդն շինեցին եւ որք աշխատեր էին  
կամ ողորմութիւն են տուեր զբացէ տէր  
Աստուած զանուանս նոցա ի զպրութիւն կե-  
նաց. ցոյն ողորմութեան ցողեաց ի ոսկերն  
նոցա ամէն: Դարձեալ ի սոյն թվին ես ա-  
նաժամն տէր Աստուածաւոր ծառայս որ  
եղէ ցանկացող այսմ պատուական եւ քառա-  
թե սուրբ Սաշին. որ էր օրինակն լաւ եւ ըն-  
տիր եւ զեղեցիկ արուեստիւք եւ ես խիստ  
փափաքէի եւ կարողութիւն չունէի. ապա  
խնդրեցի ի տեսունէ եւ ետ ինձ կարողութիւն.  
զժողովուրդս իրատելով եւ որդորելով տե-  
ամնելով եւ լսելով ցանկացան միարան  
ամենեքեան արք եւ կանայք ձերք եւ տղայք  
երիտասարդք եւ կուսանք ետուն ողորմու-  
թիւն. քանզի ձանձրութիւն համարեցայ մի  
ըստ միտջ անուանէ զբերդ զի մի նեղացին  
կարդացողք եւ լսողք: Բայց խնդրեմ ի աստ  
ժողովեալ հարցոյ եւ եղբարց լի սրտիւ աս-  
տուած ողորմի ասացէք. նախ պատճառ  
եղողաց եւ զարձաթն տուողաց եւ աշխատո-  
ղաց. եւ ինդրեմք ի տեսունէ որ զբացէ զա-  
նունս նոցա ի զպրութիւն կենաց: Այլ եւ

խաչն տէրունական լուսարայտն ապախու-  
թեան եւ ծառն կենաց տնկեալ ի մէջ դրախ-  
տին եկեղեցոյ լիցի նոցա անբարբառ բարե-  
խօս եւ լսել տացէ գերանաւէտ ձայնն որ ասէ  
եկայք օրհնեալք: ԹՎին ՌՃԻ. ամին վախ-  
ճանեցաւ տէր Աստուածատուրն. Աստուած  
ողորմի:

Ահա այսչափս բաւեցի եւ զմնացեալն  
այլում ժամու կարգացուք թէ տէր կամեցի  
ի լսելիս ժողովրդեան: Որ ողորմի Քրիստոս  
Աստուած զայս յիշատակինն տուողաց եւ  
գրեցէ զանուանս նոցա ի զպրութեան կենաց  
եւս առաւել որ աստ ժողովեալ հարցդ եւ  
եղբարց. մանաւանդ յետնեալ եւ անպիտան  
գրչի Անտոն իրիցուն հօրս տէր Ստեփաննո-  
սին մօրս Հովսէփիմէին եւ որդոցս եւ դստե-  
րացս ընդերցողիս եւ լսողաց եւ զողորմի  
ասողաց ողորմեա Քրիստոս Աստուած մեր  
ամէն: Հայր մեր որ<sup>11</sup>:

Կոնգակ Ե. Օրհնեալ տէր մեր Յիսուս  
Քրիստոս ամէն: ԹՎին ՌՃԻԳ ամին վայրն  
գերեզմանին ներգեւի. Գ. տուում զառային  
ներգեւն. Գ. տուում զառայն գնեցինք եկե-  
ղեցոյ ժողովուրդքս. ԼԵ. զուրուշի պոսուս  
վարպետ Ռհաննեսէն. յետու չէմէսին զիհն  
մեր սուրբ Աստուածածնին հէսէն. ԺԲ.  
զուուու. Աստուած օրհնէ ժողովուրդն մեծ եւ  
փոքր տուին. Աստուած ընդունելի արացէ  
եւ գրեցէ զանուանս նոցա երկրին կուց (°)  
անվախճանից ամէն:

Ի թվականիս Հայոց ՌՃԼ. եկեալ աստ ի  
քաղաքս Քեօթահիւայ Լստամպուլի ոմն  
զայումս պաշի որդովն իւրով Եագուպ կո-  
չեցիոյ. եւ աստ մեռաւ եւ թողեցին զնա-  
ընդ Մեղքիսթ վարդապետի ձախակողմեան  
զիհն: Եւ ետ սակաւ աուր եկեալ մայրն եւ  
ասկաինքն որ էր տէր Կոմիտաս որ մակա-  
նուամբ քումուրճիգատէ կոչին եւ ետոյ ի հա-  
ւատոց ուրացեալ գլխատեցաւ եւ թաղեցաւ  
ի պալլելիս գերեզմանատունն. եւ ետուն ԺԵ.  
զուուու. եւ կախեցին կանդեղ մի ի վերայ գե-  
րեզմանի որ վառեն անխափան. եւ գարձեալ  
ետուն ալ աթլազ ջերմակ կրպպտոնով պա-  
նած շուրջառ մի. եւ սաղաւարթ մի այլ  
սրմայով պանած յիշատակ սուրբ Աստուա-  
ծածնա. Աստուած ողորմի ասէք եւ Աստուած  
ձեզ սորմ<sup>11</sup>:

Ի թվին ՌՃԼԲ. եկաւ մեծ ձիւն եւ նստաւ  
Զ. օր: Զի թագաւորն զնացեալ էր Բեչու-  
վերա ի պատերազմ: Ի սոյն թվի ամինք

Մէկ լաւ պղինձ յիշատակ ի դուռն սուրբ Աս-  
տուածածնի Աստուած զժողովուրդն չէն  
պահէ մեծ եւ փոքր ետուն ողորմութիւն եւ  
խնդրեմ ի բարերար տեանէ զի ընկայցի  
իրեւ զլոմայ կնոջն այրոյն եւ հանգուցէ  
զհօղիս նոցա ի կայանս արդարոց եւ դուք  
այլ պարտիք Աստուած ողորմի ասել ամէն:  
Ի թվին ՌՃԼԳ. ամին ժամին գիշոցն խիստ  
հնացեալ էր. պատճառ եղեւ տէր Ապրիլն  
նորոգեանելու եւ արծաթն հագագելու բա-  
զում աշխատեցաւ Աստուած ողորմի ասէք եւ  
Աստուած ձեզ ողորմի:

Ի թվին ՌՃԼԳ ամին եղեւ հրկիզութիւն.  
սակաւ ի դարբնոցաց շուկայէն եւ այրեցաւ.  
Ե. զահՖէ. արաստայի կիսովն եւ բոլորքն  
քակեցին եւ չիջուցին: Դարձեալ թվին  
ՌՃԼԴ. եղեւ հրկիզութիւն ունուվարի Ե. օրն  
չարաթ եւ էր յայտնութեան խթումն. եւ  
սկսեց այլի տէմիւրճից չառչուէն եւ այրե-  
ցաւ զուրումնոց մէջն եւ արաստան բովան-  
դակ մինչեւ Բ. պէտէսէնն տայանմչ եղեւ.  
Ը. զահՖէով. եւ ամէն զիմաց բոլորքն քա-  
կեցին եւ հաղիւ կարացին չիջնել: Եւ այս  
Բ. եանդընն եղեւ պատճառ որ հանին դարբ-  
նոցին վերի շուկայէն եւ ետուն զարնին խանն  
իւրեանց օթեանք եւ շառչու: Եւ ի սոյն  
թվին երբ որ մտանք յուլիս ամիսն մեծ  
մահտարածամ եղեւ: Աստուած խաղաղու-  
թիւն տայ աշխարհիս: Գոհութիւն այժմոյս  
ժամանակիս ամէն:

Ո՞վ սիրելիք հայրք իմ եղբայր. որ եմ  
զձուց եւ եմ ախմար. որ գրելոց եմ դուքի  
բառ վասն եկեղեցոյ պղնձի համար. սէնէ  
պին եիւզ դուք ալթրտայ ալուք պիր զպան.  
Փոսաթ էլտէ էքէն աչ կուզուծի ասրէթլիք  
զպան. օրու թեվառիհտէ Եքսան պէչ զա-  
գան տէր Անտոն ճառ եթիւմէսէ օրուրուտու  
պաշլմօզ զպան\*: Որ ողորմի Քրիստոս Աս-  
տուած զայս յիշատակինն տուողաց. եւս ա-  
ռաւել որ աստ ժողովեալ քրիստոնէից. մա-  
նաւանդ գրչի Անտոն իրիցուն հօրն տէր  
Ստեփաննոսին եւ այլ մերձաւորացն ընդեր-  
ցողաց եւ լսողաց եւ զողորմի աս<sup>11</sup>:

Ճառ Ե. Օրհնեալ տէր մեր եւ Փրկիչ Յի-  
սուս Քրիստոս ամէն: Ահա կամիմ յայտ առ-  
նել սիրելի հարցդ իմոց եւ եղբարց նախա-  
ճառիս մնացեալսն. քանզի եկեալ էհաս ի մե-  
րում ժամանակիս. որպէս պատմեցաք թէ  
ՌՂԵ թվին թագաւորութեանց (sic) սուլ-  
զան Մահմաան. Ը. տարվան տղայ հասա-

կաւ: Եւ ի սորայ ԼԵ. ամի թագաւորու-  
թեանն արար զօրածոյով եւ զնայ ի վերայ  
Բիջա. որ էր թվականն Հայոց ՌՃԼԲ. եւ  
պարտեցան այնքան մինչ զի օթախն ու խա-  
ղիւէն թողին ու փախան մերկք. եւ ի գալ  
տարոյն գարձեալ զնացին եւ եկան մերկք.  
եւ ի գալ տարոյն եղեւ թվականն ՌՃԼԳ.  
Խմտատիյէ ժողովեց մեծատանց ուրիշ պէ-  
տայէտներէն զաստ. եւ զնացեալ գարձեալ  
յախտեցաւ. եւ եղեւ խանկարութիւն մեծ ի  
մէջ Օսմանցոց. եւ զօրացաւ նէմսէն մինչ  
զաք եւ ի գալ տարոյն թվին ՌՃԼԵ.  
Ստամպուլէն. Էտիրնէէն. Պրուսայէն խանէի  
զուլիս. ձ. զըշ. առին: Եւ ուրիշ քաղքերէն  
Գ. խանէի ձ. զըշ. առին եւ այնով զնացին եւ  
զարձեալ յախտեցան մինչ զի Պելլուդատն եւս  
տուին. եւ եղեւ թվականն ՌՃԼԶ. վերուցին  
սուլթան Մէհմէմէան. եւ նստուցին զսուլթան  
Սիւլէյման Գ. տարի. ի սորա ժամանակն  
հանին պղինձէ ստակն. որ է մանդրու. կամ  
տրամ պղինձ. Ա. զուրուշի. զի հատաւ խաղ-  
տայէն արծաթէ ստակ. եւ զայս հնարեցին. եւ  
լցուցին աշխարս տէրութեան իւրեանց մին-  
չեւ Գ. ամ: ԹՎին ՌՃԼԹ վերուցին զսուլթան  
Սիւլէյմանն. եւ նստուցին եղպայրն զսուլթան  
Ահմէտ. Գ. տարի. ի սորա առաջի ամին ամին  
Վենետիկն զՄոսան. ԻԳ. բերդօքն եւ վիճա-  
կօքն. թվին ՌՃԼԳ. վերուցին Ահմէտն. եւ  
նստաւ սուլթան Մուսղաֆայն Թ. տարի:  
Ի սորա առաջի ամի թագաւորութեանն եղեւ  
հաշտութիւն նէմսէով եւ այլ շրջակայ թա-  
գաւորաց եւ եղեւ խաղաղութիւն յոյժ. մինչ  
զի ողորմից տային պատճառ եղողաց: Ով  
ընդերցող եղպայր նայեաց մտաց աջօք եւ տես  
թէ ինչպէս վրդովմունք է եղեր զի ՌՃԼԲ  
թէ ինչպէս մինչեւ ՌՃԼԳ. թէ ի սովէն թէ ձէլա-  
լոց թէ մանդրուն. քանզի ինքեանք կու-  
տային պղինձ մեղանէ պահանջին արծաթ.  
եւ զի երկարեցից շատ մեծատունք ախկա-  
տացան եւ եղեն պարտատէրք. աշխարս բո-  
վանդակ աւերեցաւ ձմռան ժամանակն պա-  
տմանք եւ հարկապահանջողք եւ սէֆերցիք  
ըրայէն կոխան աննելով զնային իսկ ամառն  
Օսմանցիք զասք զասք կողութիւն կանէին.  
Եկէն անուն զօրպայի միոյ պարտութիւն  
տուին. Գ. թուրով վասն այս պատճառի զի  
անցուցէ զօսմանցիքն ի պատերազմ. եւ ժո-

ղովեալ բազումք ի գլուխ սորա գաշխարս  
կոխան աննելով եկին մինչեւ ի ծովն: Եւ նա  
անցեալ զնայ սակաւ արամբք. եւ հորովք  
գարձան եւ սկսան յայտնի եւ համարձակ գո-  
ղութիւն աննելոյ վասն որոյ ել հրաման թա-  
գաւորէն չարթեւ զնոսա. եւ քանի մի սատ-  
կեցուցին. եւ բազումք գումարեցան ի մի  
տեղ վասն ահէ սատակման եւ սկսան զիւղ  
կամ քաղաք կոխել. եւ շատ փլաս արարին.  
եւս հնարս իմացան քանի մի անուանի գոր-  
պայցի թող ետուն եւ այսու հնարիւք զատե-  
ցին եւ սատակեցուցին ի տեղիս տեղիս. եւ  
բարձաւ չարն ի միջոյ: Բայց այս ամենայն  
ի հինկ ամին մէջն կատարեցաւ. զի առնուով  
յան չկարացին ցանել զի գեղացիք ի  
բախտեան եւ ի թաքստեան կային. ահա  
այսու պատճառաւ եղեւ սով մեծ. եւ կեղա-  
ցոյ անօթիքն եւ այլ վերի քաղքերէն թափե-  
ցան. եւ յուրով ի կեղացոյն. Ժ. կամ ԺԵ.  
տարուն տղայս կամ աղջկունսն բերեալ ի քա-  
ղաքամէջի ցգէին եւ բաղչէին. եւ նոքա ան-  
տէրունք լեալ շրջին դոնէ ի դուռն եւ բա-  
զումք մեռանէին. զի էյին ամառային արեւա-  
կէս եւ ցմեռային անձրեւաղաց եւ ցրտասա-  
րոյց: Այլ եւ մատղայ կանայք եւ կատարեալ  
աղջկունք իրենց իրիչայոցիւ ի ծառայութեան  
մտեալ անձնածախք եղեն եւ անցան Եզիպ-  
տոս:

Եզպայր աջօք մերոք տեսաք ահա այս ա-  
մենայն եւ այլ աւելի. զի ի թվին ՌՃԼԲ. էն  
մինչեւ եղեւ ՌՃԼԵ. սով. եւ սկսաւ այժմու-  
թիւն լինել սկսան մեռանել օրն. Ի. կամ Լ.  
մինչ զի անձար մնացին մեռել թաղելն: Եւ  
այսմ ամենայնէ սակաւ գերձեալ էյաք. ահա  
եկեալ մանդրուն գարձեալ վրդովեց գաշխարս.  
եւ զի երկարեցից քանզի ոչ գոյր խաղաղու-  
թիւն. մինչեւ ի պարըըըն:

Յաղագս քրիստոնէից քակման խառա-  
չին. ի թվին ՌՃԼԹ. նստաւ ոմն վէզիր որ մա-  
կանուամբ կոչիւր քորբէի օղլու Մուսղա-  
ֆայ փաշայ. սա քակեց գորիստոնէից խառայն  
քանզի առաջն գուրթուք էր կապած Ի. Ի.  
զմին կու տայինք. եւ սոյ յաւելուց էլա Գ.  
ոսկի. աւսաթ Բ. ոսկի. էթնա. Ա. ոսկի ա-  
մենայն տեղի տէրութեան Օսմանցոց: Բայց  
մնաց Եզիպտոս անխախտ եւ զնացեալ ի պա-  
տերազմ ի վերայ նէմցէու եւ անդ մեռաւ.

Ի թվականութեանս. Հայոց ՌՃԼԹ ամի  
օգոստոս ամսոյ Ը. որ էր Աստուածածնայ  
բարեկենդանի շարաթն Թ. ժամու ի քաղաքն



Ի թվին ՌՃԾԶ. եղև վախճան տէր Ապրիլին եւ ետուն եկեղեցոյ սուրբ նշան մի եւ ամփոփեալ թաղեցին ի դաւիթս եկեղեցոյ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուած ձեզ ողորմի ամէն: Թվին ՌՃԾԷ. վախճանեցաւ տէր Կարապետն եւ ամփոփեալ թաղեցին ի դաւիթ սուրբ եկեղեցոյս եւ ետուն ժ. դուռուշ լուսկին սուրբ Աստուածամօրն Աստուած ողորմի ասէք ամէն: Ի թվին ՌՃԿ. ամին տէր Ապրիլին տունն առանք սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ ԴՃ. դուռուշի. մեր դանձապեա հաճի Մարտիրոսին ձեռքն եկեղեցոյ արդիւնէն. եւ անտի կիսեցանք զսեղանատանին տեղն: Քանզի առաջն սեղանատուն չունելով թէ մեռելոցի եւ թէ այլ հոգեբաժինի եկեղեցոյ մէջ նստելով շատ հոգեւոր փնաս կու լինէր. ըստ ասելոյ սրբազան առաքելոյն Պօղոսի ի պրակս իւր: Ոչ է տուն տեան ձեզ տեղի հաց ուտելոյ. միթէ տունս ոչ ունիցիք ուտելոյ եւ կամ ըմպելոյ եթէ զեկեղեցեան Աստուծոյ արհամարիցէք եւ անէք փնասս բազում: Եւ մեք զայս լսելով եւ այլ բազում գրոց սրբոց վկայեալ թէ փնաս է եկեղեցոյ մէջ հացկերոյթն: Չայս օրօնելով մեք անարժան եւ անպիտան յեանեալ եւ ամենայն բարեաց թափուրքս տէր Անտոն եւ տէր Ակոր ծառայք սուրբ Աստուածածնայ որդորելով զժողովուրդս ըստ կարեաց մերոց շինեցինք զայս սեղանատունս յիշատակ անջնջելի. Աստուած ողորմի յիշատակ տուողաց հոգոցն ամէն: Նախ Աստուած ողորմի տէր Անտոնին զի անուամբ միայն քահանայ եւ ոչ զործովս ետու ծ. զուռուշ սեղանատան շինելու յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց հօրս տէր Ստեփաննոսին եւ մօրս Հռիփսիմէին եւ ընկերօջն Հեղինէին. դեռ եւս աղօթից եւ պատարագաց մասնակից լինիմք աղօթիք ձերօք ամէն:

Ի թվին ՌՃԿԳ. ամին ապրիլ ամսոյ ԺԱ. օրն աշխարհամատրան կիրակի գիշերն եղև հրկիզութիւն մեծ որ ոչ է եղեալ այնպիսի զարհուրելի հրկիզութիւն որ այրեցաւ. Գ. խան. մեծ պէտէստէնն. դաքեհաճիւր ճամիւի, սաքանէ ճամիւի. ԶՃ. խանութով աւելի կամ պակաս վայրի շուկան պուլուս պէտէստէնէն տաշխանէն գատն. բովանդակ այրեցաւ վերի շտուռն. սաքֆաքի ճամիւին տայանմըլ եղև. մեր եկեղեցոյ անօթն պուլուզ պէտէստէնն էր. Աստուծոյ ողորմութեանն խալսեցաւ. զարմանք զարմանք որ գիշերն ի բուն մինչեւ ի սպառել Գ. կողմանն

մնաց կրակի մէջն եւ Աստուած պահեաց: Ով եղպարք տուք զոհութիւն Քրիստոսի եւ մօրն նորա կուսին Մարիամու:

Ահա կամ իմ այտ աննել բան որ շահաւէտ է ունինդնողաց. քանզի յորժամ եղև հրկիզութիւն ունէր սուրբ Աստուածամօր եկեղեցոյ. Գ. խանութ մինն պուլուզ պէտէստէնին դուռն մտաց ձախակողմն դիհն. Բ. քան առջեւն. մէկն հաճի Տատուրին էր մէկն հաճի Նասայիին որ առաջն առեալ էանք եկեղեցոյ արդիւնէն եւ սոքա եւս այրեցան. իրրեւ այրեցաւ երան ճարէճիքն ոտքի վերայ ասելով թէ որովհետեւ այրեցաւ պարտիք վերստին գնել վազըՔէն. եւ Տատուրն այլ այսպէս հօքմ առաւ թէ եւս առաւել քեաւուր պիտան վազըՔին է եւ քեաւուր պիտայի տիրոջքն ժողովեցան եւ զտին ի միջի իւրեանց հոճէտ մի որ վաղուց եանդընէն զօրով էի շինեցուցել տիրոջներուն. եւ զայն հոճէտն առեալ դնային Ստամպոլ եւ մտան ի մեծ տիւլանն եւ առեալ Փերման հանդերձ Փէթիսոյով ասելով թէ մէկ ստակ պարտք չունին վազըՔին եւ այս տեղի մոլլան եւս հոճէտ ետուր տեղըն վազըՔին պիտան ձերն է պարտք չունիք: Եւ այս հոճէտներուն մէկն մեր քեաւուր պիտայ խանութին է պուլուզ պէտէստէնին դուռն քօփն է: Իրրեւ եղև թվականն ՌՃԿԳ. զայն երկու խանութն այլ պատեցուցանք քեաւուր հանդերձ երկաթէ դոնօք ձեռամբ հաճի Մարտիրոսին եկեղեցոյ արդիւնէն: Ով եղպարք իմ սիրելիք եւ դուք պարտիք Աստուած ողորմի ասել վերոյգրեալ հաճի Մարտիրոսին եւ այլ աշխատողաց եւ պատճառ եղողաց եւ որք յիշէք յիշեալք լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ ամէն:

Նորոգեցաւ յիշատակարանս ձեռամբ անարժան տէր Անտոնին թֆն. ՌՃԿԵ. քանզի այս գիրքի միջի եղող գրեանքն այս է: Նախ Մարգիս գիրքէն սկսեցանք որ է կաթողիկէից մեկնութիւն լուսաւոր հոգի հօր եղպորս տէր Արուսիանին հետն. քանզի սա գրագիր գոլով իմ վերա շատ երախտիք ունի Աստուած լուսաւորէ իւր հոգին. եւ ետոյ վախճանեցաւ ՌՃԿԳ թվին. եւ ես այլ թոյլ տուի պատճառելով թէ քարոզգիրք շատ տպագրեցին. զայս ժԳ. տետրն մնաց ասանց կապ. ետոյ կոնտակն հնացեալ էր եւ գիրն ծանր էր կարդալու: Եւ սկսեցի վերստին նորոգել հանդերձ պատմագրով ով ընդերձողք եւ լսողք եղբայրք թէ կուզէք հանդերձ ճառօփն կարդայք

թէ չես ուզէր դճառն թող եւ կոնդակն կարգա ահա ցոյց տուած եմ կոնդակն եւ ճառն: Բայց զամէնն կարդայիք լաւ էր քանզի առաջի ժամանակի նեղութիւնն իմանալով հոլով միթիթարութիւն գտնուիք զի յոյժ աշխատեալ եմ զտիւ եւ զգիշեր անքուն մնալով ի օրինելոյ: Դարձեալ Ե. այլ տետր տողարեալ պարսպ կապած եմ ետոյ եղողինն զրեւոյ եւ դու ով սիրելի թէ հմուտ ես գրես թէ չես ուրիշ թղթի մուսէվէտէ անես գրագիր եկած ժամանակն գրել տաս. եւ մի հոգոցիւ զմեզ յիշես: Եւ դարձեալ գիրքի ետքն գրեանք կայ յոյժ օգտակար է կարդացողաց եւ լսողաց. եւ զայս գրեանքս հաւաքեալ միատեղ ետու կապել. եւ ետու յիշատակ սուրբ Աստուածածնի ինձ եւ ծնողացս տէր Ստեփաննոսին եւ մօրս Հռիփսիմէին ընկերօջն Հեղինէին եւ այլ ամենայն արեան մերձաւորացս: Ով աստուածասէր քահանայք եւ սիրելի ժողովուրդք որժամ ընդեռնուք եւ օգտիք յիշեսձիք ի մաքրապիսյ աղօթս ձեր զվերոյ գրեալսն եւ դուք յիշեալք լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ ամէն. Հայր:

(Շարունակելի:) Հրատակիչ՝ Հ. Պ. ԶՕՐԹԵԱՆ

**ՊԵՏՄՈՒԹԻՆ ԼԵՉՐԵԱՆ ՏՈՒՄԻ**

ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ  
Աշխատակից՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԿԵՍՏԵԱՆ  
(Շարունակելի:)

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ**  
ՊԱՏՄՈՒԹԻՆ  
ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՉՈՒԱՅ  
(1815—1918)

ԳՂՈՒԽ Ա.  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՆ

«Հասարակական կարիքները պիտի բաւարարուին իր հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցով ու ջանքերով» — ասել էր ձեռնարանի տեսուչ, յետագայում վերատեսուչ, Գէորգ Քահանանը իր ճառի մէջ, արտասանած ձեռնարանի 50ամեակի փառաւոր հանդէսին:

Եւ, տարակոյս չկայ, որ ասել էր մի ճշմարտութիւն, որ առաւելագոյն վերարբում է այն աղգերին, որոնք զօրի են պետական անկախութիւնից պետական հարազատ իշխանութիւնից:

Հայ ժողովրդի պատմութիւնը, մասնաւորապէս սկսուած 15րդ դարի սկզբից, երբ Ռուբինեանց հարստութեան անկումով հայ ժողովուրդը կորցրեց իր անկախ գոյութիւնը, իր պետականութիւնը, տալիս է բազմաթիւ ցայտուն ապացոյցներ յիշեալ մտքի կատարեալ ճշմարտութեան:

Պատմական այդ մոմէնտից սկսած հայ ժողովրդի հասարակական ու մշակութային յառաջադիմութիւնը ընթացել է հէնց հայ «հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչների միջոցով ու ջանքերով»:

Մի Միթիթար Արբասայր Սերաստացի (1676—1749) իր մեծատողանդ յաջորդներով վենետիկում ու վիեննայում, մի Ներսէս Աշտարակեցի իր Ներսիսեան զպրօցով, մի Գէորգ Գ. կաթողիկոս իր Գէորգեան ձեռնարանով էջմիածնում, Աղարարեան եղբայրներ իրենց «Աղարարեան զպրօցով» Հաշտարխանում, Սալիպեան զպրօցը Թէոդոսիայում, Ն. Նախիջևանի զպրօցը եւ, վերջապէս, Դորպատի հայ ուսանողների փայլուն փառանքը, — եղել են մի-մի զործոն ոյժեր, որոնք կերտել են հայ մշակոյթի հոյակապ տաճարը եւ արգելք են եղել հայ ժողովրդի